ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2015 թ. հունվարի 14 **N 4 - Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2014 թվականի փետրվարի 19-ի N 48-Լ հրամանով հաստատված՝ 2014 թվականին Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակացույցի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, որի արդյունքում պարզվել է, որ Կաթնաղբյուր գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականության 1049.62 հա արոտավայրերից համայնքի ղեկավարի կողմից վարձակալության պայմանագրեր չեն կնքվել և վարձավճարներ չեն գանձվել: Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը խախտել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ և 56^{1}-րդ հոդվածներով՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Աշոտ Հովհաննիսյանի նկատմամբ նշանակել տուգանք մեկ հարյուր հազար դրամ, որն ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ քան 15 օրվա ընթացքում՝ հ/հ 900005243119:
2. Սույն որոշման պատճեն երեք օրվա ընթացքում հանձնել Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Աշոտ Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Աշոտ Հովհաննիսյանի հանձնելու պահից, որը կարող է գանգատարկվել դատական կարգով 10 օրվա ընթացքում:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ